# ՔՀԿ հետազոտական կարողությունների զարգացում

Սոնա Բալասանյան, ՀՌԿԿ-Հայաստան,
rd@crrc.am
Նաիրա Վարդանյան, ՀՌԿԿ-Հայաստան,
pmdi@crrc.am



Հղում նկարին՝ https://www.dreamstime.com/stock-photo-multiethnic-people-holding-hands-chart-group-image43739848

# Մոդուլ 1: Հետազոտական տրամաբանության կանոնները

*Մտագրոհ. ինչո՞ւ են ՔՀԿ-ներին անհրաժեշտ հետազոտական հմտությունները*





# Ի՞նչ է հետազոտությունը

Չկա «հետազոտություն» հասկացության մեկ ու ամբողջական, վերջնական սահմանում:

Պարզ սահմանումներում (Merriam-Webster, 2017) «հետազոտությունը» ներկայացվում է որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը:





# Հետազոտության կարևորությունը ծրագրային քաղաքականության մեջ

Հաշվի առնելով հետազոտության կարևորությունը քաղաքականությունների իրականացման համար՝ այն սահմանվում է նաև որպես քաղաքականությունների ուղղորդման միջոց (Becker, Bryman and Ferguson, 2012):





# Հետազոտությունների տեսակները





- Ըստ մեթոդների՝ որակական, քանակական և խառը մեթոդներով հետազոտություններ
- Ըստ նպատակի՝ հետախուզական, նկարագրական, բացատրական
- Պիլոտային հետազոտություն
- Ըստ բնույթի՝ տեսական/փիլիսոփայական հիմք ունեցող, պրագմատիկ՝ խառը մեթոդներով հետազոտություն, գործուն հետազոտություն (action research), գնահատող (evaluation) հետազոտություններ

# Որակական տրամաբանություն



- Հետազոտության արդյունքը համոզիչ ու համահունչ պատմություն է:
- Կարիք կա բացահայտելու իրականության խորքային ու բովանդակային ասպեկտներ, մեզ հետաքրքրում են իրականության ոչ զանգվածային, մասնավոր հատվածներ:
- Մենք ունենք աշխարհայացքային կողմնորոշում և դրանում մեզ օգնում են որակական հետազոտություններում կիրառվող տեսությունները և մեթոդաբանությունները:
- Մենք իրականացնում ենք որակական **դեպքերի ընտրություն**:

*Յուրաքանչյուր տեսություն կամ մեթոդաբանություն «լինզա» է, որով մենք նայում ենք աշխարհին և սա հատկապես կարևոր է որակական հետազոտությունների պարադայում:*





# Քանակական տրամաբանություն

- Մեզ հատաքրքրում են զանգվածային երևույթներ:
- Երևույթները քանակական և թվային ցուցիչներով ներկայացնելու համար մենք ունենք «չեզոք» դիրքորոշում:
- Մենք կառուցվածքայնացնում ու չափելի ենք դարձնում մեզ հետաքրքրող երևույթները:
- Մենք իրականացնում ենք քանակական ներկայացուցչական ընտրանք:

Լսե՞լ եք հետազոտողի՝ «պոզիտիվիստի» ինքնության մասին:



# Բառարանային տարբերություն

| Որակական | Քանակական |
| --- | --- |
| • Համոզիչ ու համահունչ պատմություն<br>• Իրականության խորքային ու բովանդակային ասպեկտներ<br>• Տեսությունները և մեթոդաբանությունները որպես «լինզաներ»<br>• Որակական դեպքերի ընտրություն | • Զանգվածային դրսևորում ունեցող երևույթի քանակական ներկայացում<br>• Իրականության տարածված ու զանգվածային ասպեկտներ<br>• Պոզիտիվիստական աշխարհայացք<br>• Զանգվածային ներկայացուցչական ընտրանք |

Վարժություն. դասակարգի՛ր հետազոտական զեկույցներն ըստ իրենց որակական կամ քանակական լինելու



| Որակական հետազոտություններ, օրինակներ | Հղում |
|---|---|
| **“Missing Women” in the South Caucasus: Local perceptions and proposed solutions** | https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/22506/94705.pdf?sequence=5&isAllowed =y |
| **Rights of Children from Religious and Ethnic Minority Groups in Armenia** | http://www.epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/2014_Field_Study_Rights_of_Chidren_en.pdf |
| **A qualitative study of children, young people and ‘sexting’** | https://www.nspcc.org.uk/globalassets/documents/research-reports/qualitative-study-children-young-people-sexting-report.pdf |
| **Children’s Well-being in UK, Sweden and Spain: The Role of Inequality and Materialism A Qualitative Study** | https://old.unicef.es/sites/www.unicef.es/files/IPSOS_UNICEF_ChildWellBeingreport.pdf |
| **Most vulnerable children: world vision UK programme inclusion and impact** | http://www.iicrd.org/sites/default/files/projects/files/WVUKMVC_Final_Report_FULL_June2014.pdf |

| Քանակական հետազոտություններ, օրինակներ | Հղում |
|---|---|
| **Caucasus Barometer** | http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation_ENG.pdf |
| **STEP/Skills Measurement Research Study** | http://documents.worldbank.org/curated/en/345441468218375478/pdf/955640WP00PUBL0menia0CR0Final020140.pdf |
| **Quantitative Research Report. Audience Research Project** | http://nfvf.co.za/home/22/files/Reports/FINAL_NFVF%20ARP-QuantReport_10042015cc.pdf |
| **The Healthy Foundations Lifestages Segmentation** | http://www.thensmc.com/dev/sites/default/files/291517-283947%20-%20HF%20QUANT%20FINAL%20REPORT%2029th%20June%20%202010.pdf |
| **Food Behaviour Consumer Research: Quantitative Phase** | http://www.wrap.org.uk/sites/files/wrap/Food%20behaviour%20consumer%20research%20quantitative%20jun%202007.pdf |

# Ո՞վ է հետազոտողը և հետազոտական էթիկա



- Հետազոտական աշխարհայացք
- Աշխարհը հավաստի կերպով ու մեթոդապես ճանաչելու ցանկություն
- Հետազոտական էթիկա
- Ջեկուցման էթիկա



Կարելի է կիրառել հետազոտական էթիկայի հայտնի ուղեցույց-մշակումներ:

Ստեղծեք տեղեկատվական թերթիկներ և ստացեք հետազոտությանը մասնակցության գրավոր համաձայնություն: Խնդրեք ձայնագրության թույլտվություն:

# Վարժություն. տեղեկատվական և համաձայնության թերթիկների օրինակների ներկայացում և քննակում

| Հետազոտության ոլորտը/մեթոդաբանությունը | Հղումը՝ հետազոտական էթիկայի ուղեցույց-մշակումներ |
|---|---|
| Մարդաբանություն | Association of Social Anthropologists of the UK and Commonwealth |
| Կրիմինոլոգիա | British Society of Criminology: Code of Ethics for Researchers in the Field of Criminology |
| Կրթություն | British Educational Research Association Ethical Guidelines for Educational Research |
| Աշխարհագրություն | Association of American Geographers Statement on Professional Ethics |
| | Royal Geographical Society: Research Ethics and Code of Practice |
| Պատմություն | Oral History Society of the UK Ethical Guidelines |
| Իրավունք | Socio-Legal Studies Association: Statement of Principles of Ethical Research |
| Կառավարում | Academy of Management’s Professional Code of Ethics |
| Քաղաքագիտություն | American Political Science Association (APSA) Guide to Professional Ethics in Political Science (Section H) |
| Քաղաքականություն | Political Studies Association, Guidelines for Good Professional Conduct |
| Հոգեբանություն | British Psychological Society Code of Ethics and Conduct<br>British Psychological Society: Conducting Research on the Internet: (Guidelines for internet-mediated research) |
| Սոցիալական հետազոտություն | Social Research Association: Ethical Guidelines<br>Social Research Association : Data Protection Act 1998 : Guidelines for Social Research<br>Social Research Association: Code of Practice for the Safety of Social Researchers |
| Սոցիոլոգիա | The British Sociological Association: Statement of Ethical Practice<br>American Sociological Association: Code of Ethics |
| Վիզուալ հետազոտություն | ESRC National Centre for Research Methods Review Paper: Visual Ethics: Ethical Issues in Visual Research |

# Հետազոտական հիմնախնդիրներ և գրականության վերլուծություն



- Ինչպե՞ս «տեսնել» հիմնախնդիրը: Առօրյա դիտարկման և առողջ բանականության կարևորությունը:
- Գրականության վերլուծությունը հիմնարար փուլ է մինչև հիմնախնդրից անցում կանենք հետազոտական տրամաբանությանը, մեթոդներին և հետազոտության տիպերին:



- Հարկավոր է դիտարկել մի շարք հաջողված վերլուծություններ: Ուշադիր եղեք վերլուծական զեկույցների, հոդվածների՝ փոխառելու համար դրանց գրելաոճն ու կառուցվածքը:
- Մշակեք հղումներ կատարելու կարգ:

Ստուգեք՝ https://www.zotero.org/; https://www.mendeley.com/





# Վարկածների ձևակերպման առանձնահատկությունները





*Ինչո՞վ են օգնում վարկածները հետազոտողներին*

***Որակական:*** Երիտասարդ աղջիկների՝ ժամանցի կենսափորձը ենթարկվում է վերահսկվում է հասարակության կողմից ըստ «երիտասարդ աղջկա» կերպարին վերագրվող ավանդական ընտանեկան պատկերացումների:

***Քանակական:*** Երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը պայմանավորված է նրանց՝ ՔՀԿ ֆորմալ մասնակցությամբ:

***Խառը:*** Երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը պայմանավորված է նրանց՝ ՔՀԿ ֆորմալ մասնակցությամբ և նրանց ֆորմալ մասնակցությունը որևէ ՔՀԿ գործողություններին հանգեցնում է հաջողության պատմությունների:

# Հետազոտական նախագիծ. կառուցվածքը

- Հիմնախնդիր (1-2 էջ)
- Վարկած(ներ)
- Նպատակ, խնդիրներ (ըստ հետազոտության ծավալի)
- Մեթոդաբանություն, մեթոդներ (1,5 էջ)
- Ընտրանք/դեպքերի ընտրություն (1-1,5 էջ)
- Տվյալների վերլուծության մեթոդաբանություն (1-2 էջ)
- Հետազոտության նախագծի հայտնի թերություններ (1 էջ)





*Կանոն: Հետազոտական նախագծից պետք է պարզ ու կանխատեսելի լինի, թե ինչպես է ընթանալու հետազոտությունը: Այն կարելի է բարելավել հետազոտության իրականացման ընթացքում և հետո:*

# Մոդուլ 2: Հետազոտության մեթոդներ (ՈՐԱԿ)

*Ինչպե՞ս ընտրել*

• Դեպքերի ընտրություն, տվյալների հագեցման սկզբունք

*Ինչպե՞ս հարցնել/դիտարկել*

Թեմատիկ ուղեցույցեր, կառուցվածքայնացման աստիճան

*Ինչպե՞ս վերլուծել*

Թեմատիկ վերլուծություն

# Խորքային հարցազրույց



- Թեմատիկ զրույց
- Մտածեք կառուցվածքայնացման և միջավայրի մասին
- Ստեղծեք անկաշկանդ մթնոլորտ
- Սղագրեք ամենայն մանրամասնությամբ
- Վերադարձեք հարցվողներին հետադարձ կապի համար
- Իրականացրեք թեմատիկ վերլուծություն
- Շեշտադրեք հարցվողների ուղղակի խոսքը, բայց չափի մեջ
- Ճիշտ հղում կատարեք հարցվողների խոսքին

# Փորձագիտական հարցում

- Ովքե՞ր են փորձագետները
- Դելֆի մեթոդ, ձնակույտի մեթոդ, շղթայական ընտրանք
- Ի՞նչ/ինչպե՞ս հարցնել – լավ պատրաստվեք
- Ուշադիր եղեք փորձագետից «խլած» ժամանակին
- Ձայնագրեք և սղագրեք զգուշությամբ



# Խմբային հարցազրույց, ֆոկուս խմբային հարցում

- Ուղեցույցի մշակում
- Չափանիշների հստակեցում և պահպանում
- Ուշադրություն դարձրեք գենդերային և տարիքային համամասնությանը, այլ կարևոր չափանիշների
- Պահպանեք քննարկման մեթոդի կանոնները և էթիկան
- Պահպանեք քննարկումը վարողի չեզոքությունը

# Փաստաթղթերի վերլուծություն

- Ի՞նչ է փաստաթուղթը
- Ի՞նչ է կոդը
- Թեմաների, հասկացությունների, բառերի և բառիմաստների կոդավորում, հաշվարկում
- Ստեղծեք կոդերի գիրք/codebook

*Փնտրե՛ք, գտե՛ք տեքստային վերլուծության մեթոդների վերաբերյալ գրականություն*



# Դիտարկում



- Քարտով, կամ առանց քարտի, կառուցվածքայնացված և ոչ
- Մասնագիտական աշխարհայացք, «տեսնելու» կարողություն
- Առօրյա դիտարկում
- Վարեք օրագիր



# Վերլուծության քայլեր. օրինակ

**Քայլ 1**: Սղագրում։

**Քայլ 2**: Մեթոդաբանության իմացություն՝ ինչպես ենք ընկալում, տեսնում իրականությունը; մեր պատկերացումների, ընկալումների առանձնացում, կենտրոնացում հարցվողների փորձի և ընկալումների վրա։

**Քայլ 3**: Ստացված տեղեկատվության ընթերցում, սղագրությունների վերընթերցում, ստացված տվյալների մասին ամբողջական տեղեկատվության ստացում։



**Քայլ 4**: Իմաստային միավորների առանձնացում:

**Քայլ 5**: Յուրաքանչյուր իմաստային միավորի/միավորների խմբի համար թեմատիկ ամբողջականության ստացում, թեմաների ձևակերպում, վերաձևակերպում՝ իմաստային միավորներին տալով առավել մասնագիտական ձևակերպումներ, թեմաների վերջնական հաստատում՝ իմաստով իրար մոտ միավորները քլաստերացնելով/խմբավորելով:

**Քայլ 6**: Նկարագրական մասնագիտական տեքստի ստացում, կարևոր իմաստային  և թեմատիկ միավորների  առավել խորը ներկայացում:

**Քայլ 7**: Բոլոր նկարագրությունների իմաստային խմբավորում, կարելի է նաև թեմատիկ միավորներում, ընդհանուր տեքստի ստեղծում:

**Քայլ 8**: Անցում նկարագրականից դեպի երևույթի կառուցվածքային իրավիճակի նկարագրություն:



# Մոդուլ 3: Հետազոտության մեթոդներ (ՔԱՆԱԿ)



**Հարցաթերթ. ինչպե՞ս կազմել**

- Ի՞նչ հարցնել
- Ինչպե՞ս հարցնել
- Ի՞նչ հերթականությամբ հարցնել

**Հարցերի տեսակները**

- Բաց
- Փակ
- Կիսափակ

*Նշում: Հիշեք Ձեր հետազոտական ծրագրի նպատակի և խնդիրների մասին*

# Հարցի ձևակերպումը

- Հարցը պետք է լինի հասկանալի և պարզ ձևակերպված
- Հարցը ձևակերպված լինի հարցվողի մայրենի լեզվով՝ գրագետ, բայց ոչ շատ գրական լեզվով
- Հարցը պետք է լինի միանշանակ՝ համեմատելի տեղեկատվություն ստանալու համար
- Հարցադրումներ անելիս պետք է կողմնորոշվել միջին կրթության, միջին ունակությունների ու ինտելեկտի տեր մարդկանցով
- Չպետք է օգտագործվեն բարդ, անհասկանալի, մասնագիտական տերմիններ
- Հարցը չպետք է լինի շատ երկար

# Ինչի՞ց պետք է խուսափել

- Պետք է խուսափել 2 կամ ավելի գործոնների մասին հարցեր ձևակերպելուց

Օր.՝ Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց և երեխաների իրավունքների պաշտպաններին

- Հարցաթերթում չպետք է ընդգրկել հուշող, ուղղորդող հարցեր

Օր.՝ Բոլոր ընտանիքներն էլ ունենում են ֆինանսական խնդիրներ, Ձեր ընտանիքում նման խնդիրներ լինու՞մ են

Պետք է խուսափել ենթադրություններ պարունակող հարցերից
Օր.՝ Ինչպես գիտենք մարդկանց մեծ մասը….

- Հարցերը չպետք է լինեն վաղ անցյալի վերաբերյալ, չպետք է հիմնվել հարցվողի հիշողության վրա: Այս դեպքում պետք է կիրառել նշանակալի իրադարձությունների օրացույցը  փորձելով արթնացնել հարցվողի ասոցիատիվ հիշողությունը:

Օր.՝ Ինչպիսի՞նն է եղել խնձորի բերքը 2012-ին կամ  Ձեր մանկության տարիներին

- Չպետք է շատ երկար հարցեր ձևակերպել

- Զգուշացեք համընկնումներից: Սա կդժվարեցնի հարցաթերթի լրացումը

Օր.՝ Տարիքը18-25, 25-35…

# Առաջադրանք

Եկեք բաժանենք խմբերի և ձեզ տրված հետազոտական խնդիրների  համար փորձենք կազմել հարցեր, այնուհետև քննարկենք  և համեմատենք արդյունքները:

# Հարցաթերթերն՝ ըստ հարցումների տեսակների

**Անհատական հարցազրույց  (face to face)**

• Համեմատաբար երկար, բազմազան ու բարդ

**Հեռախոսային հարցում**

• Կարճ և հեշտ, զրույցի ոճով

**Փոստային հարցում**

• Հեշտ հարցերով, մանրամասն հրահանգներով

**Առցանց (online) հարցում**

• Հեշտ հարցերով, մանրամասն հրահանգներով

Հարցաթերթի օրինակ:
http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/Source%20Questionnaire_ENG.pdf



Չափման մակարդակները:

**Նոմինալ** - Չդասակարգված, իրար բացառող խմբեր

Օր.՝ Սեռը. 1-արական, 2-իգական: Ո՞րն է Ձեր ամենասիրած գույնը…

**Օրդինալ/Կարգավորված**

Դասակարգված, մեծի-փոքրի հարաբերություն ունեցող տարբերակներ

Օր.՝ Որքանո՞վ եք բավարարված Ձեր աշխատանքով

1. Լիովին բավարարված եմ
2. Ավելի շուտ բավարարված եմ
3. Չի կարելի ասել, որ բավարարված եմ, բայց բավարարված էլ չեմ/Չեզոք/
4. Ավելի շուտ բավարարված չեմ
5. Ընդհանրապես բավարարված չեմ



**Մետրիկական/Ինտերվալային**

Հավասար  կամ ոչ հավասար միջակայքերի բաժանված խմբեր, որտեղ հստակ սահմանված են չափման միավորները, ըստ որի բաժանված են խմբերը և որի հետ համամետվում են:

Օր.՝ տարիքը, եկամուտը, ժամանակը, գինը և այլն…

*Նշում: Ուշադիր եղեք նախկինում կազմված հարցաթերթերի և հավաստի սանդղակների:*



# Ընտրանքի բանաձև և հաշվիչ

**Ընդհանուր համախմբություն;**

**Ընտրանքային համախմբություն;**

**Ներկայացուցչականություն;**

*Հարցնելով ընտրանքնային համախմբության ներկայացուցիչների կարծիքը պետք է կարողանանք տարածել այն նաև գլխավոր համախմբության վրա:*



ԻՆՉՊԵ՞Ս
• Գլխավոր համախմբության չափն ու կառուցվածքը
• Հավաստիության աստիճան
• Շեղման աստիճան
• Պատահականության սկզբունք

Օրինակ: Պատահական թվերի աղյուսակ



Հղում նկարին: http://www.quadraphonicquad.com/forums/showthread.php?22918-Oppo-103-going

**Հղումներ:**

Ընտրանքի բանաձև և հաշվիչ, տե՛ս
http://www.raosoft.com/samplesize.html

Պատահական թվերի աղյուսակ, տե՛ս
https://www.youtube.com/watch?v=eqaYjf5zohM
https://www.youtube.com/watch?v=Uy4kGUhOuqA ,
http://www.pinsdaddy.com/random-number-table_lYil1c%7CQ5xUjNTopRzQN8WV1D2%7CrQSOuW*9aWZtVV%7CE/



# Որքա՞ն հարցնել, որ հարցումը ներկայացուցչական լինի:

| | Տնային տնտեսությունների քանակը | | | Մասնաբաժինը ընդհանուրից | | Ընտրված տնային տնտեսությունների քանակը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մարզ | Գյուղական | Քաղաքային | Ընդամենը | Գյուղական | Քաղաքային | Գյուղական | Քաղաքային | Ընդամենը |
| Գեղարքունիք | 29127 | 18239 | 47366 | 0.038 | 0.024 | 41.5 | 26.0 | 68 |
| Տավուշ | 18531 | 13613 | 32144 | 0.024 | 0.018 | 26.4 | 19.4 | 46 |
| Կոտայք | 32237 | 39990 | 72227 | 0.042 | 0.052 | 46.0 | 57.0 | 103 |
| Արագածոտն | 23051 | 8591 | 31642 | 0.030 | 0.011 | 32.9 | 12.2 | 45 |
| Լոռի | 25460 | 45048 | 70508 | 0.033 | 0.058 | 36.3 | 64.2 | 101 |
| Շիրակ | 21420 | 39956 | 61376 | 0.028 | 0.052 | 30.5 | 57.0 | 88 |
| Սյունիք | 10647 | 23857 | 34504 | 0.014 | 0.031 | 15.2 | 34.0 | 49 |
| Վայոց Ձոր | 8065 | 5627 | 13692 | 0.010 | 0.007 | 11.5 | 8.0 | 20 |
| Արարատ | 41830 | 17777 | 59607 | 0.054 | 0.023 | 59.6 | 25.3 | 85 |
| Արմավիր | 38007 | 23845 | 61852 | 0.049 | 0.031 | 54.2 | 34.0 | 88 |
| Երևան | | 286546 | 286546 | | 0.37 | 0.0 | 408.5 | 409 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 248375 | 523089 | 771464 | 0.322 | 0.678 | 354.1 | | 1100 |

# Հասարակական երևույթների նորմալ բաշխումը որպես բնական երևույթ




Հղում տեսանյութի՝ Գալթոնի տուփը: https://www.youtube.com/watch?v=6YDHBFVIvIs

# Տվյալների մշակում

- Տվյալների մուտքագրում (CSPro, Excel, SPSS…)
- Տվյալների տեղափոխում վիճակագրական վերլուծական ծրագիր (SPSS, STATA, R…)
- Փոփոխականների արժեքների մուտքագրում (տվյալադարանի ստեղծում)
- Տվյալների մաքրում



# Քանակական վերլուծության հիմնական քայլերը

**Յուրաքանչյուր փոփոխականի համար**

- պարզ հաճախականությունների ուսումնասիրություն
- կենտրոնական միտումների դուրսբերում

**Խաչաձև աղյուսակների ստեղծում և ուսումնասիրություն**

- Կապի վիճակագրական նշանակալիության դիտարկում

**Փոփոխականների փոխկապակցվածության ուսումնասիրություն (Կորելյացիաների ուսումնասիրութուն)**

**Ռեգրեսիա**

**Կլաստերային վերլուծություն/Որոշումների ծառի դուրսբերում**






# Քանակական վարկածների, անկախ և կախյալ փոփոխականներ

**Կախյալ փոփոխական** - այն փոփոխականն է, որի վրա այլ փոփոխականների ազդեցությունը պետք է ուսումնասիրել:

**Անկախ փոփոխական(ներ)** - այն փոփոխական(ներ)ն են, որոնց ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա մեզ հետաքրքրում է պարզել

**Զրոյական հիպոթեզ** - ենթադրություն, որ կախյալ և անկախ փոփոխականների միջև ոչ մի նշանակալի կապ չկա

**Ալտերնատիվ հիպոթեզ** - կախյալ և անկախ փոփոխականների միջև կա նշանակալի կապ

*Զրոյական և ալտերնատիվ հիպոթեզների հաստատումը կամ ժխտումն իրականացնում ենք վիճակագրական ծրագրերի միջոցով՝ վիճակագրական թեսթերի իրականացման արդյունքում*



*Հղում նկարին:* http://www.whatismylearningstyle.com/analytic-thinker.html

# Վերլուծական զեկույցների օրինակներ

- Որակական: http://www.epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/2014_Field_Study_Rights_of_Chidren_en.pdf

- Քանակական: http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/Migration_and_skills_2011/Migration_and_skills_Armenia.pdf



# Հետազոտական տվյալների համակարգչային վերլուծության ծրագրեր՝ SPSS, R, STATA, MAXQDA, NVIVO?

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Thank You!